

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՀՈՎԱՔԵՓՅԱՆ ՈՌՄԱՆ ԱՊԱՍՈՒ

ԴԱՅԱՎԱՐԻ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾ ՄՈԼԱՆՈՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆՈՐ ՔԱՐԻ - ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Զ.01.02 – “ԲՈՒՏԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ” մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների  
թեկնածովի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

### Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2009

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА  
ГОСУДАРСТВЕННЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

ՕՎՍԵՊՅԱՆ ՌՈՄԱՆ ԱԳԱՍԻԵՎԻՉ

ПОЛЕВЫЕ КУЛЬТУРЫ И РАСПРОСТРАНЕННЫЕ СОРНЯКИ НА ТЕРРИТОРИИ  
АРМЕНИИ В ПЕРИОД НЕОЛИТА – ЖЕЛЕЗНОГО ВЕКА

### Ա Վ Տ Օ Ր Ե Փ Ե Ր Ա Տ

диссертации на соискание ученой степени кандидата  
биологических наук по специальности 06.01.02 – “Растениеводство”

ԵՐԵՎԱՆ - 2009

Աստենախոսության թեման հաստատվել է <<ԳՆ Երկրագործության և Բույսերի պաշտպանության գիտական կենտրոնի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր  
Հ.Վ. Հովսեփյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր  
Վ.Ա. Ավազյան  
կենսաբանական գիտությունների թեկնածու  
Ա.Լ. Մկրտչյան

Առաջատար կազմակերպություն՝ <<ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2009թ.-ի հունիսի 12-ին, ժամը 13<sup>30</sup>-ին  
Հայաստանի պետական ագրարային համալսարանում գործող 011 (Ագրոնոմիա)  
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Տերյան 74, 0009, ք. Երևան):

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական ագրարային  
համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2009 թ.-ի մայիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր  
Հ.Ս. Հարությունյան

---

Тема диссертации утверждена на ученом совете Научного центра земледелия  
и защиты растений МСХ РА.

Научный руководитель: доктор сельскохозяйственных наук  
Г.В. Овсепян

Официальные оппоненты: доктор биологических наук  
В.А. Авакян  
кандидат биологических наук  
А.Л. Мкртчян

Ведущая организация: Институт Ботаники НАН РА

Защита диссертации состоится 12-ого июня 2009 г. в 13<sup>30</sup> час. на заседании  
специализированного совета 011 (Агрономия) в Государственном аграрном  
университете Армении (адрес: ул. Теряна 74, 0009, Ереван).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ГАУА.

Автореферат разослан 11-ого мая 2009 г.

Ученый секретарь спецсовета,  
доктор сельскохозяйственных наук

Վ.Ս. Արյունյան

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ատենախոսությունը Հայաստանի Հանրապետության տարածքի նախապատմական դարաշրջանների՝ մ.թ.ա. VI – I հազարամյակների բուսաբուծությանը վերաբերվող հնաբուսաբանական հետազոտություն է, որում ներկայացվում և քննարկվում են տվյալ դարաշրջաններում գոյություն ունեցած դաշտային մշակաբույսերը, դրանց ցանքերն աղտոտող մոլախոտերը, բուսաբուծության վարժան առանձնահատկությունները, երկրագործական մշակույթի փոփոխման և դրանց առնչվող այլ հարցեր: Հետազոտության հնաբուսաբանական մեթոդների համեմատաբար ծավալուն կիրառումը հանրա-պետության տարածքում զգալիորեն երիտասարդ պատմություն ունի, ուստի այդ հասկացությունը դեռևս անծանոթ է շատերի համար: Հնարիտարանությունը (անգլ. archaeobotany կամ թալաէօթնօբօտան) գիտություն է անցյալ դարաշրջանների մարդու գործունեության հետ առնչվող բույսերի մասին: Ի տարբերություն հնաբուսաբանության (անգլ. palaeobotany), որի ուսումնասիրության առարկա են հանդիսանում բույր անցյալ երկրաբանական ժամանակաշրջանների բույսերը և որի մի ճյուղն է հանդիսանում հնաբուսաբանությունը, ժամանակագրորեն վերջինիս հետազոտության ոլորտն ընդգրկում է միայն ամերոպոգեն (մարդածին) ժամանակաշրջանը:

**Աշխատանքի արդիականությունը:** Ըստ Ն.Ի. Վավիլովի «Հ տարածքը մշակաբույսերի ծագման առաջավորապեսական շրջանի անդրկովկասայան ենթաշրջանի մի մասն է» (Վավիլով, 1960), այն գտնվում է «բարեբեր մահիկի» (անգլ. fertile crescent; Zohary, Hopf, 2000) անմիջական հարևանությամբ՝ վերջինից դեպի հյուսիս-արևելք: Այդ հանգամանքը առանձնահատուկ կարևոր է դարձնում մեր տարածքի հնաբուսաբանական նյութերի ուսումնասիրությունը՝ մշակաբույսերի ընտելացման մի շարք հարցերի պարզաբանման տեսանկյունից: Երկրորդը, որն արդիական է դարձնում «Հ տարածքում հնաբուսաբանական հետազոտությունների անհրաժեշտությունը, երկրագործական մշակույթի դեպի հյուսիս տարածման գործընթացում Կովկասյան տարածաշրջանի անցույի լինելու հանգամանքն է: Այդ առումով «Հ տարածքն աշխարհագրորեն առաջնային դիրք է գրավում և կարող է համարվել Կովկասում երկրագործության տարածման մեկնարկային գոտի:»

«Հ տարածքում նախապատմական ժամանականությունը բուսաբուծության մասին հետևությունները մինչև սույն ուսումնասիրությունը հիմնված են եղել գլխավորապես անուղղակի տվյալների վրա, ինչպիսիք են բույսերի մշակության և վերամշակման մասին վկայող գործիքների գտածնները, բազմաթիվ մշակաբույսերի վայրի ազգակիցների կարգաբանական բազմազանությունը և այլն» (Բդյոյան, 1972; Պուտրովսկի, 1961; Վավիլով, 1960, 1965; և այլն): Մեր կատարած աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են նախապատմական ժամանականություն բույսերի մշակության մասին վկայող անմիջական փաստացի տվյալներ՝ մշակաբույսերի մնացորդներ: Մինչև մեր հետազոտությունների իրականացումը հնաբուսաբանական գտածնների հիման վրա կատարված մասնագիտական հրապարակումների թիվը սահմանափակվում էր մոտ մեկ տասնյակով և վերաբերվում գլխավորապես երկարի և բրոնզի դարաշրջաններին (Գլուխ 1): Այդ հրապարակումներում ներկայացվող «Հ տարածքի մշակաբույսերի վաղագոյն գտածնները վերաբերվում են վաղ բրոնզեդարին և թվագրվում մ.թ.ա. IV հազարամյակի վերջով» (Ղանդիլյան, 1976): Առևա սակավաթիվ հրատարակումներում համեմատաբար ամփոփիչ պատկեր տրվել է միայն Վանի թագավորության շրջանի մշակաբույսերի

Վերաբերյալ՝ այն էլ միայն կարգաբանական կազմի առումով (Տյմանյան, 1944; Գյուկանյան, 1966b; Միքոյան և ճր., 1998; և այլն): Հրատարակումների մեջ մասում բացակայում են գոտածոների նկարագրությունները և նկարները, որոշներում՝ անգամ հետազոտված նյութերի կոնկրետ քանակությունները և հայտնաբերման վայրերի մանրամասները: Արդյունքում նմանատիպ նյութերի վերաբառմնամասիրման հնարավորությունները բնականաբար խիստ սահմանափակ են: Այդ պրոբլեմը հատկապես սրվում է հաշվի առնելով այն հանգանանքը, որ վերոհիշյալ նյութերի մեծամասնությունը կա'մ ընդհանրապես չեն պահպանվել, կա'մ ոչ պատշաճ պահպանման արդյունքում (օրինակ՝ պիտակավորումը հստակ չի կատարվել) լրիվ կամ մասնակիրեն կորցրել են իրենց գիտական արժեքը:

### Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները.

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել << տարածքի նախապատմական դաշտային մշակաբույսերի և դրանց ցանքերն աղտոտող մոլախոտերի կարգաբանական կազմը, տնտեսական նշանակությունները և ազդոֆիտոցենոգների առանձնահատկություններն ըստ դարաշրջանների ու աշխարհագրական-էկոլոգիական պայմաններից, որի ազդեցությունն է առաջնային ուսումնասիրվող մշակաբույսերի կազմի վրա:

#### Անհրաժեշտ է եղել յուժել հետևյալ խնդիրները.

- Հայտնաբերել << տարածքում նոր քարի - երկարի դարաշրջանների բուսաբուծության մասին վկայող անմիջական ապացույցներ՝ դաշտային մշակաբույսերի և մոլախոտերի մնացորդներ,
- Հետազոտել այդ հնարքուսաբանական գոտածոնները և որոշել դրանց կարգաբանական պատկանելիությունները,
- Վերծանել ուսումնասիրված բույսերի բրածոյացման առանձնահատկությունները հնավայրերն ընդգրկող տարածքներում՝ ըստ ժամանակաշրջանների և որոշակի հողակիմայական պայմանների մերքում,
- Հնավայրի սահմաններում մանրամասնորեն նկարագրել գոտածոնների հայտնաբերման տեղերը, ինչպես նաև նշել դրանց մշակույթային, ժամանակագրական և շերտագրական պատկանելիություններն ու կոնկրետ հնագիտական իրավիճակները:

#### Աշխատանքի գիտական նորույթը:

- Արձանագրվել է, որ << տարածքում բուսաբուծությամբ գրաղվել են առնվազն նոր քարեդարից (մ.թ.ա. VI հազարամյակ) Արարատյան դաշտում,
- << տարածքի մ.թ.ա. VI-I հազարամյակների տարբեր դարաշրջանների համար արձանագրվել են առնվազն 25 դաշտային մշակաբույսեր՝ 16 հացարույս, 6 հատիկաբնդեղեն և 3 սովորական յուղատու: Այդ դաշտային մշակաբույսերի ցանքերն աղտոտող 23 ընտանիքների պատկանող 74 մոլախոտերից 45-ը << տարածքի նախապատմական ժամանակաշրջանի համար առաջին անգամ արձանագրվել են մեր կողմից:
- Նոր քարեդարում Արարատյան դաշտում վառվշտված և սորուկված օգտագործվել են որպես յուղատու բույսեր (հնարավոր է նաև մշակվել են). այդ բույսերի կիրառումը նախապատմական ժամանակների այլ բնակատեղիներում նախկինում արձանագրված չի եղել,
- Պարզվել է, որ տեղաբնակ հասարակության հազարամյակների փորձի արդյունքում բրոնզի դարում կիրառվել են հացաբույսերի՝ գարու և ցորենի որոշակի

համակցությամբ խարը ցանքեր, որն ապահովել է առավելագույն քանակի բերք մշակության և բնակլիմայական ամենաանբարենպաստ պայմաններում,

- Արձանագրվել է, որ Վանի թագավորության շրջանում (Երկարի դար, մ.թ.ա. IX-VI դդ.) Հայաստանի տարածքում դիտարկվել է բուսաբուծության բուռն զարգացում,
- Բացահայտվել է, որ հին հասարակությունների բուսաբուծության առանձնահատկությունները ձևավորվել են տվյալ հասարակության տնտեսական և մշակույթային ավանդույթների համաձայն:

### **Տեսական և կիրառական նշանակություն:**

- Արշաջին անգամ կազմվել է «Հարածքի նոր քարի - Երկարի դարաշրջանների դաշտային մշակաբույսերի և մոլախոտերի ագրոկենսաբազմազանությունն արտահայտող ցանկ և պարզվել է, թե բուսաբուծությունը ինչ փոփոխություններ է կրել հանրապետության տարածքում նշված դարաշրջաններում,
- Կատարված հետազոտությունների շնորհիվ հստակեցվել և ճշտվել է տարածաշրջանի դերն ու տեղը մշակաբույսերի ծագման առաջավորապիկական կենտրոնի սահմաններում, մասնավորապես՝ փաստացի տվյալներով հաստատվել է Արարատյան դաշտի հարավային Կովկասի հնագույն Երկրագործական շրջաններից մեկը լինելու հանգանաքը,
- Բացահայտվել է, որ ուշ նոր քարի դարաշրջանի բուսաբուծությունը հարավային Կովկասում և Եվրոպայում էական ընդհանուրություններ ունեն. հնարավոր է, որ բուսաբուծության դեպի Եվրոպա ուղղված ալիքը (առնվազն մասամբ) սկսվել կամ անցել է «Հարածքի Վրայով»,
- Ստացված տվյալները կարևոր կիրառական նշանակություն ունեն նաև բարձր բերքատու, հիվանդությունների, վնասատուների նկատմամբ դիմացկուն և տեղի բնակլիմայական պայմաններին առավել հարմարված սորտերի ստացման սելեկցիոն աշխատանքներում տեղական ելանյութ մշակաբույսերի ընտրության հարցերում ուղղորդվելու արումով,
- «Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, թե որ տարածաշրջանի որ բնակլիմայական պայմաններում ինչպիսի մշակաբույսեր են աճեցվել և ինչ հաջողություններ են ձեռք բերվել Երկրագործության ասպարեզում: Ստացված տվյալները, որպես պատմական անփոխարինելի փորձ, լրացնում են Երկրագործության ոլորտում մեր փորձնական գիտելիքները:

**Աշխատանքի վերծագնահատում:** «Հետազոտությունների արդյունքները գեկուցվել են «ՀԱԱ Հնագիտության և օգգագրության ինստիտուտի ու ԳՆ Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոնի գիտական խորհուրդների նիստերում (2007-2008 թթ.), ինչպես նաև մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներում (2003-2008 թթ.): Մասնագիտական որակավորման բարձրացման և փորձի փոխանակման ծրագրերի շրջանակներում հետազոտությունների արդյունքները քննարկվել են նաև Գերմանիայի, Ֆրանսիայի և Ուկրաインի համապատասխան գիտա-հետազոտական հաստատություններում:

**Հրապարակումներ:** Ասենախոսության հիմնական նյութերով հրատարակվել է 16 գիտական աշխատանք:

**Ասենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ասենախոսությունը (149 էջ) բաղկացած է ներածությունից, չորս գլուխմերից, որոնք ընդգրկում են 22 առյուսակ

ու 27 նկար, և օգտագործված գրականության ցանկից, որն ընդգրկում է 110 անվանում, և հավելվածից (3 էջ):

## ԱՇԽԱՏԱՄԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

#### **ԳԼՈՒԽ I. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՄԲՈՒՍՔԱՆԱԿԱՆ ՌԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՓՈՓ ԾՐԱՊՐԱՆՔԸ**

Այս գլխում քննարկվում են «Հ տարածքի հնաբուսաբանական նյութերի մասնագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ Ս. Թամամշյանի (1935), Մ.Գ. Թումանյանի (1944, 1948), Ռ.Ա. Պետրովի, Ա.Լ. Թալսթաղյանի, Մ.Մ. Յակովըցիների, Ֆ.Խ. Բախտեկի (ըստ Պոտրովսկի՝ 1950, 1952, 1955, 1961), Վ.Հ. Գուլբանյանի (1966a, 1966b), Պ.Ա. Ղանդիլյանի (1976; 1998; ըստ Բաճալյան, 2003) և Ի.Գ. Գաբրիելյանի (ըստ Միրզօյին և այլ պատմությունների՝ 1998; Սելքոնյան, Գաբրիելյան, 2001) հրատարակումները: Հայաստանի հնավայրերից հայտնաբերված հնաբուսաբանական նյութերի վերաբերյալ տվյալներ սկսել են կուտակվել դեռևս 20-րդ դարի սկզբից: Վերոհիշյալ հետազոտողների կողմից արձանագրվել են վաղ բրոնզի - երկարի դարաշրջանների տարբեր տեսակների ցորեններ, գարիններ, աշորա, կորեկներ, սորգո, ոսպ, ոլոր, սկսեռ, բակլա, քունջութ և այլ դաշտային ծագաբրույթեր, որոնք հայտնաբերվել են հիմնականում մ.թ.ա. IX-VI դր. հնավայրերից:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

#### **ԳԼՈՒԽ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԲՈՒՍՔԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՄԲՈՒՍՔԱՆԱԿԱՆ ԳՏԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԵՐՄԱՆ ՈՒ ՌԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Հետազոտությունները կատարվել են 2003-2009 թթ.՝ երեք փուլերով՝ դաշտային աշխատանքներ, լաբորատոր հետազոտություններ և սեփական ուսումնասիրություններից ստացված ու գրական տվյալների վերլուծություն, որոնք մանրամասն քննարկվում են ատենախոսության այս գլխում:

Ուսումնասիրության նյութը են հանդիսացել «Հ տարածքում գտնվող նոր քարի 2, պղնձի-քարի 3, վաղ բրոնզի 10, միջին բրոնզի 4, ոչ բրոնզի 6 և երկարի դարերի 15 տեղավայրերից» (մնացածնը 33 հնավայր; նկ. 1) հայտնաբերված մի քանի տասնյակ հազար միավոր պտղասերմնաբանական գտածոնները: Հնագիտական նստվածքներից բուսական մնացորդների անջատման համար կիրառվել են մաղման և ֆլուտացիայի դաշտային մեթոդները:

Հայտնաբերված բուսական մնացորդները, որոնք գրեթե բացառապես ներկայացված են ածխացած կամ հանքայնացած պտղասերմնաբանական նյութերով և դրանց դրոշմներով, ուսումնասիրվել են մորֆոլոգիական և անատոմիական լաբորատոր մեթոդներով: Պարզաբանվել են հայտնաբերված բույսերի տափոնոմիայի (պահածոյացման, բրածոյացման) առանձնահատկությունները: Նոյնացվել են հայտնաբերված գտածոնների կարգաբանական պատկանելությունները, ապա տափոնոմիական ու արձանագրված բուսատեսակների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների հիմն վրա վերծանվել, մեկնաբանվել բուսաբուծության յուրահատկությունները տվյալ տեղանքի և

դարաշրջանի համար: Ստացված տվյալների աճփոփմամբ փորձ է արվել դուրս բերել դաշտային մշակաբույսերի և մոլախոտերի կազմի, ինչպես նաև բուսաբուծության վարման առանձնահատկությունների փոփոխություններն ըստ դարաշրջանների և տարածաշրջանների:

### **Նկար 1. ՀՀ տարածքի նոր քարի - երկարի դարյան դաշտային մշակաբույսերի և մոլախոտերի տեղավայրերը**



**Հնավայրեր.** 1 - Ալբաշենի (Խաթունարխ) նոր քարի դարյան բնակատեղի, մ.թ.ա. 60-50-րդ դդ., 2 - Առատաշենի նոր քարի դարյան բնակատեղի, մ.թ.ա. 60-50-րդ դդ., 3 - Թեղուտի պղնձի-քարի դարյան բնակատեղի, մ.թ.ա. 40-35-րդ դդ., 4 - Արենի-1 (Թօչունների քարայր) պղնձի-քարի դարյան քարայր բնակատեղի, մ.թ.ա. 41-38-րդ դդ., 5 - Գողձձորի պղնձի-քարի դարյան բնակատեղի, մ.թ.ա. 36-34-րդ դդ., 6 - Գեղարոտի ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 35-29 դդ., Գեղարոտի ՈւԲԴ բնակատեղի, մ.թ.ա. 15-13-րդ դդ., 7 - Ապարան III ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 34-29-րդ դդ., 8 - Ծաղկասարի ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 33-29-րդ դդ., 9 - Ոսկեվազի (Ալբանի հուշարձան) ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 30-24-րդ դդ., 10 - Արագածի-բերդ ՈւԲԴ բնակատեղի, մ.թ.ա. 15-13-րդ դդ., 11 - Մոխրաբըլուր ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 29-26-րդ դդ., 12

- Լորուսի ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 29-26-րդ դր., **13** - Այգեվանի ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 27-25-րդ դր., Այգեվանի ՄԲԴ բնակատեղի, մ.թ.ա. 18-16-րդ դր., **14** - Էլար, Р3, ՎՐԴ բնակատեղի, մ.թ.ա. 26-24-րդ դր., **15** - Շենգավիթի ՎՐԴ բնակատեղի, Շենգավիթի N3 ՎՐԴ դամբարան, մ.թ.ա. 25-22-րդ դր., **16** - Ներքին Նավերի դամբարանադաշտ, N3, 4 և 5 ՄԲԴ դամբարաններ, մ.թ.ա. 24-23-րդ դր., **17** - Աղավնատան դամբարանադաշտ, N52, 56 և 58 ՄԲԴ դամբարաններ, մ.թ.ա. 19-18-րդ դր., **18** - Շաղաթ-1 ՄԲԴ բնակատեղի, մ.թ.ա. 18-16-րդ դր., **19** - Ծաղկահովիտի ՈւԲԴ բնակատեղի, մ.թ.ա. 15-13-րդ դր., Ծաղկահովիտի դամբարանադաշտ, B09 և B11 ՈւԲԴ դամբարաններ, մ.թ.ա. 15-13-րդ դր., Ծաղկահովիտի ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 6-4-րդ դր., **20** - Հոռոմի ՈւԲԴ բնակատեղի, մ.թ.ա. 15-13-րդ դր., Հոռոմի Վաղ ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 11-9-րդ դր., Հոռոմի Վթ բնակատեղի, մ.թ.ա. 8-6-րդ դր., **21** - Հնաբերդի դամբարանադաշտ, A1 ՈւԲԴ դամբարան, մ.թ.ա. 13-րդ դր., **22** - Ույժի (VP s21) ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 13-11-րդ դր., **23** - Թեյշեբանի, մինչ-Վթ ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 13-8-րդ դր., **24** - Զուջանի դամբարանադաշտ, ՈւԲԴ - ԵԴ դամբարաններ, մ.թ.ա. 13-6-րդ դր., **25** - Մեծամորի Վաղ ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 12-9-րդ դր., **26** - Ենոքավան-2 ԵԴ քարայր բնակատեղի, մ.թ.ա. 11-8-րդ դր., **27** - Ղվինի ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 9-8-րդ դր., **28** - Արգիշտիխինիի, Վթ բնակատեղի, մ.թ.ա. 8-6-րդ դր., **29** - Կրամուսի ԵԴ ամրոց բնակատեղի, մ.թ.ա. 8-6-րդ դր., **30** - Կարմիր բլուր, Վթ բնակատեղի, մ.թ.ա. 7-6-րդ դր., **31** - Շաղաթ-3, ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 7-6-րդ դր., **32** - Թազավորանիստի ԵԴ բնակատեղի, մ.թ.ա. 7-4-րդ դր., **33** - Սև-սև քարերի բլուր, ԵԴ ամրոց բնակատեղի, մ.թ.ա. 6-5-րդ դր.:

**Նշումներ.** ՎՐԴ - Վաղ բրոնզի դարյան, ՄԲԴ - միջին բրոնզի դարյան, ՈւԲԴ - ուշ բրոնզի դարյան, ԵԴ - երկարի դարյան, Վթ - Վանի թագավորության շրջան (մ.թ.ա. IX-VI դր.):

### ԱՏԱՑՎԱԾ ՏԿՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Գլուխ III. «ՀԱՏԱՑՎԱԾ ՀԱՍԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՎԱՅՐԵՐԸ ԸՍՏ  
ԴԱՏԱՑՎԱԾՆԵՐԻ, ՀԱՅՏԱՄԵՐԿԱԾ ԴԱՏԱՅԻՆ ՄԵԱԿԱԲՈՒՅԱՆԵՐՈՒՄ,  
ՄՈՒԱՆՈՏԵՐԸ ԵՎ ԲՈՒԱԲՈՒԾՈՒՅՈՒՆԸ ՆՈՐ ՔԱՐԻ - ԵՐԿԱԹԻ  
ԴԱՐԱՇԽԱԾՆԵՐՈՒՄ

**3.1. Հայաստանի նորքարեդարյան հնաբուսաբանական տեղակայութը (մ.թ.ա. VI հազարամյակ):** «Հ տարածքում նոր քարի դարաշշանի (նեղիյան) հնաբուսաբանական նյութեր հայտնաբերվել են Արարատյան դաշտում գտնվող երկու հարևան (6 կմ հեռ.)՝ Առատաշենի և Ակնաշենի վաղ երկրագործական բնակատեղիներից (նկ. 1):

**3.1.1. Առատաշենի և Ակնաշենի հնավայրերից հայտնաբերված բուսական մնացորդները, դրանց կարգաբանական կազմը և պահպանման ձևերը:** Բուսական մնացորդների պահպանման ձևերը Առատաշենում և Ակնաշենում հիմնականում նոյնանման են՝ ներկայացված են առավելապես շինարարական կավում ներփակված բույսերի մնացորդներով և հնավայրերի մշակույթային շերտերում պահպանված ածխացած և քարացած բուսական մնացորդներով: Շինարարական կավում և խցեղենում առկա բուսական մնացորդների դրոշմները ներկայացված են գլխավորապես հացազիների հասկային և ծաղկային թեփուկներով, հասկիկների մնացորդներով, հասկի առանցքի բեկորներով, բակլազգիների ունդերի փեղկերով, խաչածաղկավոր բույսերի պատճաճաների փեղկերով և այլն, որոնք իրենցից ներկայացնում են մշակաբույսերի կալսման արգասիքներ:

Կատարված հետազոտությունների արդյունքում երկու հնավայրերում միասին որոշվել են 38 կարգաբանական միավորների պատկանող բարձրակարգ բույսեր՝ 37 բուսատեսակ Ակնաշենից և 16՝ Առատաշենից:

**3.1.2. Հայաստանի նորքարեդարյան ժամանակաշրջանի բուսաբուծության ներազարգությունը:** Կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Արարատյան դաշտում նեղինիքան դարաշրջանում բուսաբուծության հիմնական ուղղությունը եղել է հացազգիների մշակությունը, հիմնական մշակված հացարույսերն են եղել մերկահատիկ ցորենը, հաձարը և մերկահատիկ գարին: Մշակվել են նաև միահատիկ ցորեն և թեփուկավոր գարի, սակայն շատ փոքր քանակություններով: Զարգացած է եղել նաև բակլազգիների և յուղատուների մշակությունը: Հատիկարնեղեններից հիմնականում մշակվել է ոսպ, ավելի փոքր քանակություններով՝ համրիչանան վիկ և, հավանաբար, նաև վիկի այլ տեսակներ: Իրենց յուղատու հատկությունների համար ընտելացվել և հավանաբար նաև մշակվել են անապատային վարչուկը և սորուկը, որոնց օգտագործման հանգամանքը նեղինիքան դարաշրջանում մեր կողմից արձանագրվել է առաջին անգամ:

**3.1.3. Առատաշենի և Ակնաշենի նորքարեդարյան հնավայրերի մոլախոտային ֆլորան:** Հայտնաբերված մոլախոտային բույսերը տարբեր է կողողիա և տնտեսական նշանակություններ ունեն: Նրանց մի մասը կարող է դիտարկվել որպես սեգետալ մոլախոտեր՝ դաշտային պատառտուկ, մակարդախոտ, գանգուր ավելուկ, կաղամբ, ցորնուկ, սպիտակ թելուկ, հավակատար, դաշտային և դեղատու կաքավկուտներ, թշնային մատիտեղ, շնկոտեմ, ցանկապատային տիփատառուկ: Կարելի է առանձնացնել ռուտերալ մոլախոտերի խումբ, որն ընդգրկում է սեգետալների խմբից որոշ բույսեր և՛ սև բանգի, ավելուկ, թելուկ, հավակատար և մատիտեղ, որոնք աճել են բնակատեղիների շրջակայրում: Հայտնաբերվել և նույնացվել են նաև բրշխազգիների ընտանիքին պատկանող մի քանի բույսեր՝ ծովակինյա պալարաձլուկ, բոշխ և դուն, որոնք աճել են բնակատեղիներին մերձակա գետափնյա տարածքներում կամ ոռոգման համակարգերի շուրջը:

**3.1.4. Հայաստանի նորքարեդարյան բուսաբուծության դիրքը մերձավորարևելյան և կովկասյան նորքարեդարյան բուսաբուծության համատեքստում:** Արարատյան դաշտի և Կովկասի նորքարեդարյան բուսաբուծությունների նմանությունը արտահայտվում է մերկահատիկ հացազգի մշակաբույսերի գերակշռմամբ: Փաստագրված տարբերություններն են՝ Արարատյան դաշտում բակլազգի մշակաբույսերը ունեցել են ավելի մեծ տնտեսական նշանակություն, քան Կովկասի այլ տարածքներում, և Արարատյան դաշտում որպես յուղատու մշակաբույսեր օգտագործել են անապատային վարչուկը ու մանրապտուղ սորուկը:

Մերձավոր Արևելքի հետ նորքարեդարյան բուսաբուծությունների նմանությունները կայանում են նրանում, որ Արարատյան դաշտում մշակված բոլոր բույսերը (բացառությամբ յուղատուների) մշակվել են նաև Մերձավոր Արևելքում, ինչպես նաև նրանում, որ բակլազգի մշակաբույսերը ունեցել են կարևոր տնտեսական նշանակություն: Տարբերությունները՝ Արարատյան դաշտում գերակշռել է մերկահատիկ հացազգիների մշակությունը և երկրորդ՝ Արարատյան դաշտում որպես յուղատու մշակաբույսեր օգտագործված բույսերը անհայտ են նաև Մերձավոր Արևելքի համար:

Ստացված տվյալները հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստանի նորքարեդարյան բուսաբուծությունը Մերձավորարևելյան և Կովկասյան այլ տարածաշրջանների համաժամանակյա բուսաբուծությունների հետ ընդհանրութ-

յուններ ունենալով հանդերձ տարբերվում է երկուսից էլ՝ արտահայտելով համեմատաբար մեկուսացած զարգացում:

**3.2. Հայաստանի պղնձիքարեղարյան հնարուսաբանական տեղավայրերը (մ.թ.ա. V հազ. վերջ – IV հազ. կեսեր):** Հետազոտվել են ՀՀ տարածքում գտնվող երկու պղնձիքարեղարյան (Էնեոլիթ) հնարուսաբանական տեղավայրեր՝ Արենի-1 (Թռչունների քարայր) և Գողեծորի (Սիսիան) բնակատեղիները, ինչպես նաև օգտագործվել է Թեղուտի (Արարատյան դաշտ) բնակատեղիում (նկ. 1) հացազիների հայտնաբերման մասին հավիրճ հաղորդումը:

**3.2.1. Թեղուտի հնավայրից հայտնաբերված հնարուսաբանական նյութերի մասին:** Պեղված կացարաններում հում աղյուսների հարդի խառնուրդի մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցորենի ու գարու հատիկների և ցորունների մնացորդներ (Վ.Հ. Գուլբանյան (ըստ Մարտիրոսյան, Թորոսյան, 1967)):

**3.2.2. Արենի-1 հնավայրից հայտնաբերված դաշտային մշակաբույսերը և մոլախոտերը, բուսաբուծությունը պղնձիքարեղարյան Արենիում:** Այս քարայր-բնակատեղիում հայտնաբերվել են մեծաքանակ ջրազրկված և ածխացած բուսական մնացորդներ: Դաշտային մշակաբույսերից արձանագրվել են փափուկ ցորեն, հաձար, մերկահատիկ և թեփուկավոր գարիներ (հատիկներ, հասկի տարբեր մասեր), ոսպ, տափոլո (սերմեր): Բակլազգիների մնացորդները հազվադեպ են՝ ալմահայտորեն դրանք տվյալ բնակչության տնտեսությունում մեծ նշանակություն չեն ունեցել: Մոլախոտերից արձանագրվել են դաշտային, որը գերակշռում է, և դեղատու կաքավկրկուտներ, արևելյան ոսկրաբեկ, շնալեզու, կովախոտ, դաշտային գորտնուկ, կայզուն մակարդախոտ, մատիտեղ, սորուկ, վառվշուկ, շնկուտեն, խլածաղիկ, տոլուտ, խաշխաշ, գարու վայրի անորոշ տեսակ և այլն:

**3.2.3. Գողեծորի հնավայրից հայտնաբերված դաշտային մշակաբույսերը և մոլախոտերը, բուսաբուծությունը պղնձիքարեղարյան Գողեծորում:** Հայտնաբերված ածխացած և հանքանացած պտղասերմնաբանական նյութերում գերակշռում են ածխացած հացահատիկները: Հատիկների և հասկի առանցքի մնացորդների ուսումնասիրության արդյունքում մեր կողմից արձանագրվել են առնվազն 7 մշակովի հացազիներ՝ փափուկ, կլորահատիկ և կարծր ցորեններ, հաձար, մերկահատիկ և թեփուկավոր քազմաշարք գարիներ, հնարավոր է նաև աշորա, և 2 հատիկաբնդեղեններ՝ մանրասերմ ոսպ ու ոլոր: Արձանագրվել են հետևյալ մոլախոտերը՝ գանգուր ավելուկ, դաշտային և դեղատու կաքավկրկուտներ, կայզուն ու կեղծ մակարդախոտեր, դաշտային շնկուտեն, սպիտակ թելուկ, տոլուտ, սև բանգի, կաղամբ, կովախոտ, ծվծպուկ, մատիտեղ, թելուկ, ցորոնուկ, որոմ, դաշտային պատատուկ, արևելյան ոսկրաբեկ, փոքր մոնմախոտ, գետնաստղ, նեսվիա, թօշնային մատիտեղ, փաթաթվող ֆալոպիա, իշակարնուկ, կումկուրորուկ, շղթնածաղկավորներ և այլն: Մշակովի հացազիների, բակլազգիների և մոլախոտերի հարաբերակցությունը կազմել է 80.4%, 0.6% և 19.0%, ցորենինը և գարինին՝ 57% և 43%: Էնեոլիթյան Գողեծորում բուսաբուծության առանցքային ուղղությունը եղել է հացաբույսերի, հիմնականում՝ փափուկ ցորենի և մերկահատիկ գարու մշակությունը:

**3.2.4. Հայաստանի պղնձիքարեղարյան բուսաբուծությունը:** Հետազոտված էնեոլիթյան հնավայրերում դաշտային մշակաբույսերին և մոլախոտերին վերաբերվող իրավիճակները ընդհանուր գերով նման են միմյանց: Ստացված

տվյալների համաձայն << տարածքում պղնձիքարեդարրում հացաբույսերի մշակությունը եղել է երկրագործության առանցքային ուղղությունը, իսկ հատիկարներենների մշակությունը ունեցել է երկրորդական նշանակություն: Յուղատու բույսերի մշակության մասին վկայող նյութեր չկան: Ի նկատի ունենալով, որ հետազոտված հնավայրերը պատկանում են էներիջյան դարաշրջանի ուշ փուլերին, կարելի է ենթադրել, որ հետագա՝ բրոնզի և վաղ երկարի դարաշրջաններում դիտարկվող բակլազգիների և յուղատու բույսերի մշակության ծավալների անկման գործընթացը սկսվել է էներիջի վաղ փուլերում:

### **3.3. Հայաստանի բրոնզեդարյան հնաբուսաբանական տեղավայրերը**

#### **3.3.1. Վաղ բրոնզեդարյան տեղավայրերը (մ.թ.ա. IV հազ. կեսեր – III հազ.**

**կեսեր):** Ներկայումս Հայաստանում վաղ բրոնզեդարյան հնաբուսաբանական նյութեր հայտնաբերվել են 10 հնավայրերից՝ Գեղարոտի, Ապարան III-ի, Ծաղկասարի, Ոսկեվազի, Մոխրաբլուրի, Լորուտ, Այգևանի, Էլարի և Շենգավիթի (բնակատեղի և դամբարան) համապատասխան մշակության շերտերից (նկ. 1): Մեր կողմից ուսումնասիրվել են Գեղարոտի, Ծաղկասարի բնակատեղներից և Շենգավիթի N3 դամբարանից հայտնաբերված հնաբուսաբանական նյութերը ամբողջությամբ:

**3.3.2. Հայաստանի միջին բրոնզեդարյան հնաբուսաբանական տեղավայրերը (մ.թ.ա. III հազ. կեսեր – II հազ. կեսեր):** << տարածքում միջին բրոնզեդարյան հնաբուսաբանական գտածոները սակավաթիվ են: Դրանք արձանագրվել են 4՝ Ներքին Տավերի և Աղավնատան դամբարանադաշտերից, Շաղաթ-1 և Աղեվանի բնակատեղներից (նկ. 1): Առաջին երեք հնավայրերի հնաբուսաբանական նյութերն ամբողջությամբ ուսումնասիրվել են մեր կողմից:

**3.3.3. Հայաստանի ուշ բրոնզեդարյան հնաբուսաբանական տեղավայրերը (մ.թ.ա. XV – XIII դդ.):** Ուշ բրոնզեդարյան հնաբուսաբանական նյութերը << տարածքում հայտնաբերվել են 6՝ Գեղարոտի, Արագածի բերդի, Ծաղկահովտի, Հռովմի ՈՒԲԴ բնակատեղներից և Ծաղկահովտի ու Հնաբերդի դամբարանադաշտերի ՈՒԲԴ դամբարաններից (նկ. 1): Մեր կողմից հետազոտվել են Գեղարոտի, Արագածի բերդի, Ծաղկահովտի բնակատեղների հնաբուսաբանական նյութերը:

**3.3.4. Հայաստանի բրոնզեդարյան դաշտային մշակաբույսերը և մոլախոտերը:** Գտածոների մեծ քանակությանը գույքահետո << տարածքի բրոնզեդարյան մշակաբույսերը առանձնանում են իրենց կարգաբանական կազմի աղքատությամբ և հնաբուսաբանական գտածոների միօրինակերպամբ: Դաշտային մշակաբույսերի կազմը ընդհանուր է վաղ, միջին և ուշ բրոնզի դարաշրջանների համար: Նշված երեք փուլերում էլ մշակաբույսերը ներկայացված են միայն հացազգիներով: Հաշվի առնելով, որ բրոնզեդարյան դաշտային մշակաբույսերի կազմը որոշակիորեն տարրերվում է ավելի վաղ՝ նեղիջյան և էներիջյան, և ավելի ուշ՝ Վանի թագավորության և հետագա դարաշրջաններից, ստորև վաղ, միջին և ուշ բրոնզեդարյան հնաբուսաբանական տվյալները քննարկել ենք մի համատեքստում:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում ցորեններից արձանագրվել են միահատիկ ցորեն, հաճար, կարծր և փափուկ ցորեններ: Փափուկ ցորեններից հայտնաբերվել են սովորական, կրնդիկ, կլորահատիկ և սպելտա ենթատեսակները (տեսակները): Սովորական փափուկ և կունդիկ տեսակները գերազանցում են

ցորենների ընդանուր կազմի մեջ: Ցորենի հեքսապլիդ տեսակների միջանկյալ տիպի մորֆոլոգիայով հատիկները զգալի քանակություն են կազմում, որը կարող է վկայել հիբրիդիզացիոն պրոցեսների մասին:

Գարու մշակովի տեսակը այս դարաշրջանում ներկայացված է և երկարը, և բազմաշարք ենթատեսակներով, սակայն բոլոր դեպքերում հայտնաբերվել են միայն թեփուկավոր Վարիացիաներ, մերկահատիկ ծերը խապար բացակայում են: Անհրաժեշտ է նշել նաև շշած գարու առկայության մասին:

Այլ հացարույսերից << տարածքի բրոնզի դարաշրջանի համար հայտնի են աշորան և կորեկը:

Ածխացած հացահատիկների մաքուր զանգվածների անխաթար իրավիճակներում (*in situ*) հայտնաբերումը կարող է հանդիսանալ նաև մի շարք ագրոտեխնիկական միջոցարումների կիրառման և բերքի զտման աշխատանքների վկայություն: Գեղարոտի վաղ բրոնզի դարյան հացահատիկային զանգվածների օրինակով կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ հացահատիկելենի մաքրության աստիճանը եղել է բավականին բարձր՝ նույնիսկ ըստ ժամանակակից դրական աստիճանավորման համակարգի (Մաթևոսյան, Գյուլիսասյան, 2000) այդ նմուշները կարելի է որակավորել որպես մաքրության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի հացահատիկելեն: Համանման մաքրության հացահատիկային պաշար գրանցվել է վաղ բրոնզի դարյան Ապարան-III (Պ.Ա. Ղանդիլյան (ըստ Բադալյան, 2003)) և Կանի թագավորության շրջանի Կարմիր Բլուր (Պոտրովսկի, 1950; Տյմանյան, 1948) բնակատեղիներում:

Բերքի այս կարգի մաքրություն հնարավոր է ստանալ ստորև նշվող երեք հիմնական փուլերով կատարվող ագրոտեխնիկական միջոցարումներից մեկի կամ բոլորի համալիր կիրառման արդյունքում:

1. Մոլախոտերի դեմ պայքար (օրինակ՝ քաղիան),
2. Մշակաբույսերի ընտրողաբար և խնամքով հրականացվող բերքահավաք,
3. Հավաքված բերքի զտում նոյախոտերից և այլ օտարածին մարմիններից:

Քննարկվող նմուշներում, վիճակագրական անալիզների արդյունքների համաձայն, գարին բազմաթիվ անգամներ գերակշռում է ցորենի նկատմանը: Ցորենի և գարու համատեղ հայտնաբերման երևույթը հիմք է տալիս ենթադրել, որ այդ հացարույսերը վաղ բրոնզի դարում << տարածքում մշակվել են համատեղ, այսինքն՝ կիրառվել են խառը ցանքսեր: Այդ երևույթը շարունակությունը միջին և ուշ բրոնզի դարաշրջաններում չի հերքվում: Նշված ցանքերում գերակշռող տարրը եղել է թեփուկավոր գարին: Իսկ ցորենների կազմը, որը դիտարկվող նմուշներում համեմատաբար հետերոգեն է, ներկայացված է նմուշների հացահատիկային զանգվածի մոտ 0.6-8.4%-ով (միջինը 4.0%): Հացարույսերի այս հարաբերակցությունը հավանաբար եղել է լավագույնը. օրինակ՝ Կանի թագավորության շրջանի Կարմիր Բլուրից հայտնաբերված հացահատիկային զանգվածում ցորենի չափաբաժնը կազմել է մոտ 5.0% (Տյմանյան, 1948), նոյն ժամանակաշրջանի Արգիշտիկնիլիում՝ 1.3% (Գյուկանյան, 1966b), և 1.0-20.0%՝ Այգեանի մ.թ.ա. III հացարամյակի շերտերում (Ղանձուլյան, 1976):

Չնայած հետազոտված հնավայրերի զգալի քանակությանը (20 բրոնզեդարյան տեղավայր) հացագիներից զատ այլ բրոնզեդարյան դաշտային մշակաբույսերի գտածոներ ներևս չեն հայտնաբերվել՝ ի տարբերություն ավելի վաղ՝ նեղիքյան և էնեղիքյան դարաշրջանների: << Ետազոտված հնավայրերում մշակովի բակլազգիների և յուղատու բույսերի գտածոները խապար բացակայում են: Ակներև է, որ մյուս մշակաբույսերի դերը տեղաբնակչության տնտեսությունում էական

նշանակություն չի ունեցել: Առկա տվյալների համաձայն բուսաբուծության առանցքային ուղղությունն եղել է սովորական հացաբույսերի մշակությունը: «Հ տարածքի գլխավոր բրոնզեդարյան դաշտային մշակաբույսերն են եղել թեփուկավոր երկ- և բազմաշարք գարիները, սովորական և կունդիկ փափուկ ցորենները և հաճարը: Ցորենների և գարիների տեսակային ու ներտեսակային բազմազանությունը, սակայն, հարուստ է, որը վկայում է բրոնզի դարաշրջանում մեր տարածաշրջանում բուսաբուծության խիստ մասնագիտացված լինելու մասին: Մշակաբույսերի վերոհիշյալ համալիրի (թեփուկավոր գարի՝ 90%, սովորական և կունդիկ փափուկ ցորեններ՝ 10%) համատեղ մշակությունը նվազագույնին է հասցել բերքի կորստի սպառնալիքը՝ այդպիսով հանդիսանալով մշակաբույսերի լավագույն համակցություն, որը մշակության ընթացքում դրսնորում է ցածր պահանջկուտություն հողակիհմայական պյամանների և բարձր ոինացկրունություն երաշտի, հիվանդությունների և այլ անբարենպաստ գործոնների նկատմամբ:

Հացաբույսերի մասնագիտացված մշակությունն այդպիսի նվազագույն խնամք պահանջող համակցությունով և այլ մշակաբույսերի, մասնավորապես բակլազգիների և յուղատուների բացակայության հանգանանքը մեզ հիմն են տալիս ենթադրելու, որ բրոնզի դարաշրջանում բուսաբուծությունը ցուղատնտեսության մեջ առաջնային նշանակություն չի ունեցել և կատարել է միայն բնակչությանը ածխաշրջերով (հացով) ապահովելու գործառոյթ:

Ըստ մեր հետազոտությունների արդյունքների բրոնզեդարյան մոլախոտերը ևս նման են իրենց կարգաբանական կազմով: Այս դարաշրջանի հիմնական սեգետալներն են ավելուկը, մակարդախոտերը, ցորոնւկը, որոնը, թելուկը, հավակատարը, դաշտային կաքավկրկուտը, արևեյան ոսկրաբեկը, մուգ գորշ նոնեան, ողիսելիհան, բոշխը, իշակարնուկը, կովախոտը, բանգին, շնկոտենը, մանուշակը, դաշտային պատատուկը, մկան գարին, միամյա կարծրախոտը, թշնային նատիտեղը, շրջնածաղկավորների, բոշխազգիների, բակլազգիների տարբեր տեսակներ և այլն:

**3.4. «Հ երկաթեդարյան հնաբուսաբանական հնավայրերը (մթ.ա. XIII - IV դդ.), հայտնաբերված բուսական մնացորդները, դրանց կարգաբանական կազմը:** «Հ տարածքում բուսական մնացորդներ հայտնի են երկաթի դարաշրջանի 15 հնավայրերից: Քննարկվող երկաթեդարյան հնավայրերն են Ույժի VP 21, Թեյշերակինի, Զուշևանի դամբարանադաշտ, Սեծանոր, Հոռոմ, Ենոքավան-2 քարայր, Դվին, Արգիշտիխինիի, Արամուս, Կարմիր Բլուր, Շաղաթ-3, Թագավորանիստ, Ծաղկահովտի Եղ բնակատեղի և Սև-սև քարերի բլուր հնավայրերը (նկ. 1): Ույժի VP 21-ի, Ենոքավան-2 քարայրի, Արամուսի ամրոցի, Շաղաթ-3-ի, Թագավորանիստի և Ծաղկահովտի Եղ բնակատեղիների հնաբուսաբանական նյութերը անբողջությամբ ուսումնավիրվել են մեր կողմից, իսկ մյուս երկաթեդարյան հնավայրերի դեպքում օգտագործվել են գրական տվյալները:

**3.4.1. Հայատանի երկաթեդարյան դաշտային մշակաբույսերը և մոլախոտերը:** Վերլուծելով ներկայունս առկա հնաբուսաբանական տվյալները կարող ենք «Հ տարածքի երկաթեդարյան բուսաբուծությունը բաժանել երկու փուլի՝ 1) մինչ-Վանի թագավորության շրջան, 2) Վանի թագավորության և հետագա շրջան: «Հ տարածքի բրոնզի դարի և երկաթի դարի մինչ-Վանի թագավորության շրջանի բուսաբուծությունները հանդիսանում են մեկը մյուսի օրգանական անընդհատ շարունակությունները:

Երկաթեղարյան մինչ-Կանի թագավորության շրջանի երկրագործության համար շարունակում է բնութագրական մնալ հացաբույսերի մշակությունը՝ որպես երկրագործության գործնականորեն միակ ուղղություն: Այս փուլի համար բնութագրական դաշտային մշակաբույսերը շարունակում են մնալ թեփուկավոր մշակովի գարին և փափուկ ցորենը՝ բրոնզեդարում գերակշռող նույն՝ սովորական, կունդիկ և կլորահատիկ փափուկ ենթատեսակներով: Այս փուլում դաշտային մշակաբույսերից մշակվել են նաև հաճար, սպելտա ցորեն և, երբեմն, նաև կորեկ, որը համատարած և մեծ ծավալներով սկսել է մշակվել միայն Կանի թագավորության օրոք և հետո:

Կանի թագավորությունում գարգացրել են գյուղատնտեսական մշակույթը, որի հիման վրա է տարածաշրջանում ընթացել բուսաբուծության հետագա զարգացումը: Հատկանշական է կրտսել կանանակ հացահատիկային, հատիկալունդ-եղեն, յուղատու, թելատու և որոշ սովորական հացահատիկային դաշտային մշակաբույսերի ներմուծումը և մեծածավալ մշակումը Հայկական Լեռնաշխարհում: Սովորական հացահատիկային մշակաբույսերից հիշատակելի է աշորայի մշակությունը որպես հնքնուրույն մշակաբույս: Տեղական մինչ-Կանի թագավորության շրջանի երկրագործությանը բնորոշ վերոհիշյալ սովորական հացահատիկային մշակաբույսերը շարունակել են մնալ որպես տարածաշրջանի գլխավոր դաշտային մշակաբույսեր: Անհրաժեշտ է առանձնահատուկ նշել կորեկանան հացահատիկային մշակաբույսերի՝ սովորական կրտեկի, իտալական խոզանուկի ու սովորական սորգոյի, ինչպես նաև քունջորի մուտքը և հիմնավորումը մեր տարածաշրջանում: Կանի թագավորության շրջանում մշակված հատիկարնեղեններից են մանրահատիկ ուտելի ոսպը, մշակովի ոլոռը և մշակովի սիսեռը: Մշակովի յուղատուներից են եղել քունջորը և մանրապտուղ սորուկը:

Կանի թագավորության ընթացքում Հայկական Լեռնաշխարհում գրանցվել է բուսաբուծության բուռն ծաղկում և ներմուծված մշակաբույսերի արմատավորում տեղական բնակչության գյուղատնտեսական մշակույթում:

#### ԳԼՈՒԽ IV. ԴԱՇՏԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԸ և ՄՈԼԱՏԱՌԵՐԸ ՀՀ ՏԱՐՍՖՈՒՄ ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ԵՐԿԱԹԻ ԴԱՐՈՒՄ ԸՆՏ ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵԱՍԱԿՈՒԹՅԱՆ

ՀՀ տարածքի դաշտային մշակաբույսերի հայտնի ամենավաղ գտածոները պատկանում են ուշ նոր քարի դարաշրջանին (մ.թ.ա. VI հազարամյակ):

Աշխատանքում ցեղային և ենթացեղային՝ տեսակի, ենթատեսակի, վարիացիայի և այլն, մակարդակով ներկայացվում են 34 կարգարանական միավորների պատկանող մշակաբույսեր և ընտելացման ենթարկված բույսեր, որոնցից 25-ը պատկանում են հացազգիների (Poaceae), 6-ը՝ բակլազգիների (Fabaceae), 2-ը՝ խաչածաղկավորների (Brassicaceae), որի նշվող տեսակները հավանաբար ընտելացվել են, և 1-ը՝ քունջորազգիների (Pedaliaceae) ընտանիքներ: Այդ մշակաբույսերից միայն իտալական խոզանուկը, սորգոն, սիսեռը, բակլան և քունջորն են, որ աշխատանքում բերվում են միայն գրական տվյալների հիման վրա:

Աշխատանքում դիտարկվում են 23 ընտանիքների պատկանող 74 մոլախոտեր, որից 26-ը նոյնականացվել են տեսակային, 38-ը՝ ցեղային և 10-ը՝ ընտանիքային մակարդակով:

**4.1. Մշակովի հացազգիները (Poaceae) << տարածքում նոր քարի - երկաթի դարաշրջաններում:** Սերձավորարևեյան նորքարեդարյան հիմնադիր մշակաբույսերի կազմում ներառված երեք հացազգիները՝ հաճարը (*Triticum dicoccum*), միահատիկ ցորենը (*T. monococcum*) և գարին (*Hordeum vulgare*) մշակվել են ուշ նորքարեդարյան Հայաստանում: Ի լրումն դրանց այդ դարաշրջանում առկա է նաև մերկահատիկ ցորեն (*Triticum durum/aestivum*), որի պատկանելիությունը տեսրա- (*T. turgidum*, *T. durum*) կամ հերսապղիդ (*T. aestivum*) տեսակի կարող է հաստատվել միայն լրացուցիչ զտածների, մասնավորապես՝ հասկի առանցքի մնացորդների հայտնաբերման արդյունքում:

Հացազգի մշակաբույսերը << տարածքի նախապատճենական դարաշրջանների բնակչության համար միշտ ունեցել են առաջնային նշանակություն՝ անընդմեջ մշակվելով նոր քարի դարից ցայսօր: Հացազգիների մշակությունը << տարածքում չի ընդմիջվել անգամ միշտն բրոնզի դարում, երբ բնակչության մեծամասնությունը նստակյաց կենսակերպ չի վարել:

**Ցորեններ (*Triticum*):** Միահատիկ ցորենը (*Triticum monococcum*) Հայաստանի տարածքում մ.թ.ա. առկա է եղել նոր քարի դարաշրջանում, սակայն, ի տարրերություն հաճարի, տնտեսական կարևոր նշանակություն չի ունեցել: Հայաստանի ամենահայտնի ավանդական մշակաբույսերից մեկը՝ հաճարը (*Triticum dicoccum*), մեր երկրի տարածքում աճում է սկսած նոր քարի դարաշրջանից և ի սկզբանե ունեցել է կարևոր տնտեսական նշանակություն՝ կազմելով տեղի բնակչության բուսական սննդաբաժնի էական բաղադրանաբու: Սակայն հարկ է նշել, որ մերկահատիկ ցորենները, մասնավորապես փափուկ ցորենները, որոնք ևս անընդմեջ մշակվել են նոր քարի դարաշրջանից, “նրգակցության” արդյունքում հակում են ունեցել դուրս մղել հաճարին և այլ հացաբույսերին, սակայն վերջիններին կարևորությունը չի նվազել հատկապես երկրագործության համար ծայրահեռ դժվարին պայմաններով շրջաններում: Փափուկ ցորենների (*Triticum aestivum*) առկայությունը առանց ընդմիջումների և հստակորեն ամրագրվում է սկսած պղնձիքարի դարաշրջանից: Փափուկ ցորենների մշակության ընթացքում միշտ առավելությունը տրվել է սովորական (*T. aestivum* ssp. *vulgare*) և կունդիկ (*T. aestivum* ssp. *compactum*) ենթատեսակներին: Բրոնզի և երկարի դարաշրջաններում փորձ քանակություններով մշակվել է նաև լիրորահատիկ փափուկ ցորեն (*T. aestivum* ssp. *sphaerococcum*), որը հետագայում դուրս է մղվել մշակությունից և ներկայում չի աճում հանրապետության տարածքում: Կարծի ցորենները (*T. turgidum*, *T. durum*), որոնք պակաս տնտեսական կարևորություն են ունեցել, բոլոր դարաշրջաններից չեն, որ հայտնի են, սակայն դա բնականաբար չի նշանակում, որ վերջիններս բացակայել են:

**Գարի (*Hordeum vulgare*):** Գարին թեև համարվում է պակաս սննդային արժեք ունեցող մշակաբույս, սակայն նրա տարրեր ենթատեսակները և ծեները տեղացի բնակչության սննդաբաժնում միշտ կարևոր տեղ են ունեցել սկսած դեռևս նորքարեդարյան ժամանակաշրջանից: Մշակովի գարու չորս հիմնական ծեներից՝ երկշարք թթվուկավոր (*Hordeum vulgare* ssp. *distichon* convar. *distichon*), երկշարք մերկահատիկ (*H. vulgare* ssp. *distichon* convar. *nudum*), բազմաշարք թթվուկավոր (*H. vulgare* ssp. *vulgare* convar. *vulgare*) և բազմաշարք մերկահատիկ (*H. vulgare* ssp. *vulgare* convar. *coeleste*), միայն երկշարք մերկահատիկ ծենը չի արձանագրվել << տարածքի նոր քարի - երկարի դարաշրջաններում:

Նոր քարի և պղնձիք-քարի դարաշրջաններում մշակվել են հիմնականում մերկահատիկ գարիներ, մասնավորապես մերկահատիկ վեցաշարք գարի, իսկ

թեփուկավոր գարին թեև առկա է եղել, սակայն մշակվել է շատ փոքր քանակություններով: Նկատելի է ցորենի և գարու տնտեսական նշանակություն-ների միանմանությունը նոր քարեղարում և ինչ-ինչ բնակլիմայական կամ մշակույթային-տնտեսական գործուների փոփոխության արդյունքում գարու մշակության գերակայման երևոյթը պիտիքարեղարում: Բրոնզի դարաշրջանում, հատկապես լեռնային շրջաններում, գարու մշակությունը որոշակիորեն սկսում է գերակշեռ: արդյունքում հացարույսերի բերքի 80-90%-ը և ավելին ներկայացված է լինում գարիով: Երկարի դարաշրջանում, մասնավորապես Վանի թագավորության շրջանում և դրանից հետո, ցորենի և գարու մշակությունների հարաբերակցությունը փոխվում է հօգուտ ցորենների:

**Կորեկներ (Paniceae):** Կորեկանման հացահատիկային մշակաբույսերը ըստ ներկայումս առկա տվյալների տեղական ծագման մշակաբույսեր չեն: Հավանաբար դրանք բերվել են մեր տարածաշրջան վաղ բրոնզի դարաշրջանում, իսկ տնտեսական կարևոր նշանակություն են ձեռք բերել միայն Երկարի դարում, հատկապես Վանի թագավորության շրջանում: Ընդ որում հիմնականում մշակվել է սովորական կորեկը (*Panicum miliaceum*), իսկ սորգոն (*Sorghum*) և խոլալական խոզանուկը (*Setaria italica*) մշակվել են այսկա քանակություններով:

**Այլ հացարույսեր:** Այլ մշակովի հացարույսերից միայն աշորան է արձանագրվել (*Secale cereale*), որը << տարածքում հայտնի է դեռևս պլնիք-քարի, վաղ և ուշ բրոնզի դարաշրջաններում, սակայն մշակության առավել հստակ նշանները վերաբերվում են միայն Երկարի դարաշրջանին:

**4.2. Մշակովի բակլազգիները (Fabaceae) << տարածքում նոր քարի - Երկարի դարաշրջաններում:** “Մերձավորակեցյան նորժարեդարյան հիմնադիր մշակաբույսերի կազմ”-ում հանդես եկող հատիկաբնդեղեն մշակաբույսերից մեր հանրապետության տարածքում առաջինը (ուշ նոր քարեդար, 8.000 տարի առաջ) հայտնվել են ուստի ոսպը (*Lens culinaris*) և համրիչանման վիկը (*Vicia ervilia*):

<< տարածքում բակլազգի մշակաբույսերը մեծ ծավալներով մշակվել են և հացազգիներին գրեթե չզիջող տնտեսական նշանակություն են ունեցել նորժարեդարյան դարաշրջանում՝ Արարատյան դաշտում՝ մ.թ.ա. ամբողջ VI հազարամյակի ընթացքում: Ենթադրաբար բակլազգի մշակաբույսերը պահպանել են իրենց վերոհիշյալ կարգավիճակը նաև մ.թ.ա. V հազարամյակի ընթացքում: Ենեղիբայան դարաշրջանում, մ.թ.ա. IV հազարամյակի ընթացքում նկատելի է բակլազգի մշակաբույսերի տնտեսական նշանակության անկում և հացազգի մշակաբույսերի գերակայում: Բրոնզեդարում բակլազգի մշակաբույսերը խսպառ բացակայում են և վերահայտնվում միայն Երկարեդարում: Վանի թագավորության օրոք: Վերոհիշյալ ժամանակաշրջանը, երբ հատիկաբնդեղեն մշակաբույսեր << տարածքում չեն արձանագրվել, տևել է շուրջ 2.000 տարի:

**Ոսպ (*Lens culinaris*):** Ոսպը Հայաստանի նախապատմական դարաշրջանների ամենահաճախ հանդիպող և ամենալայնատարած հատիկաբնդեղեն մշակաբույսն է: Եթե տվյալ դարաշրջանում և տվյալ տարածքում մշակվել են հատիկաբնդեղեններ, ապա դրանցից մեկը պարտադիր եղել է ոսպը: Նախապատմական դարաշրջաններում Հայաստանում մշակված ոսպի բոլոր ձևերը ներկայացված են եղել բացառապես մանրասերմ ենթատեսակով (*Lens culinaris* subsp. *microsperma*): Հատկանշական է, որ այդ երևոյթը շարունակվել է նաև մեր թագավորության ընթացքում և մշակովի ոսպի Հայաստանի համար տեղական ձևերը նույնպես ներկայացված են մանրահատիկ ենթատեսակով (Столетова, 1930):

**Համրիչաննան վիկ (Vicia ervilia):** Համրիչաննան վիկը ոսպի հետ համաժամանակյա ՀՀ տարածքի վաղագոյն մշակովի հատիկարնեղեներից է: Սակայն, ի տարբերություն ոսպի, այս մշակաբույսը երբեք տեղացի բնակչության կյանքում կարևոր տնտեսական նշանակություն չի ունեցել: Համրիչաննան վիկը մեր հանրապետության սահմաններում մշակվել է նոր քարի դարում, ոսպի հետ միաժամանակ՝ Արարատյան դաշտում: Ապա եկել է մի տևական ժամանակաշրջան՝ մոտ 4.000 տարի՝ մ.թ.ա. V հազարամյակի սկզբից մինչև Վանի թագավորություն, երբ այս մշակաբույսի առկայության վերաբերյալ տվյալները բացակայում են: Միայն Վանի թագավորության շրջանում է ՀՀ տարածքում այս մշակաբույսը վերադարձնում երկրագործության ասպարեզ:

**Ոլոռ (Pisum sativum):** Ոլոռը և Հայաստանի տարածքում մշակված ամենահին մշակաբույսերից է: Հնարավոր է, որ ոլոռ Արարատյան դաշտում սկսել են մշակել դեռևս նոր քարի դարից՝ ոսպի և համրիչաննան վիկի հետ միաժամանակ: Ոլոռի մշակության ամենավաղ փաստարկները ՀՀ տարածքում գալիս են աղնճիքարեղարից՝ մ.թ.ա. IV հազարամյակի առաջին կեսից, երբ այն մշակվել է Սյունիքում՝ Որոտան գետի ավազանում: Ապա մյուս բակլազգի մշակաբույսերի նման ոլոռը և բացակայում է բրոնզեդարում և վերահայտնվում Վանի թագավորության շրջանում: Վանի թագավորության օյուղա-տնտեսությունում ոլոռը հանդիսանում է ամենակարևոր տնտեսական նշանակություն ունեցող հատիկարնեղեն մշակաբույսերից մեկը:

**Վիկ (Vicia sativa, Vicia spp.):** Վիկը վերը բվարկված հատիկարնեղենն մշակաբույսերից հետո ՀՀ տարածքի նախապատմական դարաշրջաններում ամենահաճախ և ամենամեծ քանակություններով հանդիպող բակլազգի բույսն է:

**Ալի հատիկաբնեղեն մշակաբույսեր:** ՀՀ տարածքի նախապատմական երկրագործությունում ներգրավված հայտնի այլ բակլազգի մշակաբույսերից են տափոլոր (Lathyrus sativus), վիտեռ (Cicer arietinum) և բակլան (Vicia faba), որոնք մեր երկիր նախապատմական բնակչության տնտեսությունում ունեցել են լոկ երկրորդային նշանակություն:

**4.3. Մշակովի յուղատու բույսերը ՀՀ տարածքում նոր քարի - երկաթի դարաշրջաններում:** Մշակված վաղագոյն յուղատու բույսերը մեր երկրում հայտնի են ուշ նոր քարեղարում, Արարատյան դաշտում (Արատաշեն, Ակնաշեն)՝ մ.թ.ա. VI հազարամյակ, և ներկայացված են անապատային վառվորուկով (Alyssum desertorum) և մանրապտու սորուկով (Camelinea microcarpa):

Հետազոտված հնավայրերում վառվորուկի և սորուկի մնացորդների հսկայական քանակություններով և գրեթե բոլոր իրավիճակներում հանդես գալը, այդ մնացորդների կալաման արգասիքներով՝ արանձին պատիճակներով (սերմերը գրեթե բացարձակապես բացակայում են) հանդիպելու հանգանանքը, պատիճակների խիտ կուտակումներով և հաճախ այլ բույսերի խառնուրդներից գերծ լինելը, այլ ավանդական և ոչ ավանդական յուղատու բույսերի (կտավատ, խաշխաշ, գաթի ծաղիկ և այլն) մնացորդների հսկար բացակայությունը մեզ հիմք են տալիս ենթադրել, որ այս երկու խաչածաղկավորները ընտելացվել և հավանաբար մշակվել են Արարատյան դաշտի նոր քարի դարյան բնակչության կողմից՝ մոտ 8.000 տարի առաջ (Honsepyan, Willcox, 2008): Սորուկը նախկինում միշտ դիտարկվել է որպես երկրորդային ծագման մշակաբույս, որը սկզբից աղտոտել է կտավատի ցանքերը և հետո միայն ընտրասերվել և մշակվել որպես առանձին մշակաբույս (Zohary, Hopf,

2000): Վառվշուկը նախկինում երթեք չի հիշատակվել որպես մշակաբույս ո՞չ անցյալ և ո՞չ է լուրջ ժամանակների համար:

Հնարավոր է, որ պահածոյացման պայմանները և յուղատու մշակաբույսերի մեծամասնության մոտ սերմերի մանրությունը և նույր սերմնային ծածկույթներն են պատճառը, որ նոր քարի դարին հաջորդած (մինչև Վանի թագավորություն) դարաշրջաններում, մոտ 4.000 տարի տևողությամբ, յուղատու մշակաբույսերը բացակայում են ՀՀ տարածքում: Բացառված չէ, որ յուղատու և հատիկացներեն մշակաբույսերը իսկապես բացակայել են և ՀՀ տարածքի բրոնզեդարյան բնակչությունը իր սփյուռքությունը և ձարպերի կենսական պահանջը բավարարել է կենդանական սննդի հաշվին:

Վանի թագավորության շրջանի յուղատու մշակաբույսեր հայտնաբերվել են անհսարար (in situ) իրավիճակներում՝ կավանորմներում կամ ծիթահանության համար նախատեսված սենյակներում մեծ քանակություններով կուտակված սերմերի ծևով: Ըստ գրական տվյալների Վանի թագավորությունում մշակված զիխավոր յուղատու մշակաբույսը եղել է քունջութք (*Sesamum orientale*), որի մզվածքի մեծաքանակ մնացորդներ են հայտնաբերվել Կարմիր Բլուրի ամրոցում (Պոտրովսկի, 1950, 1952, 1955, 1961): Վայրի նախնու և ազգակիցների ժամանակակից տարածման, ինչպես նաև հնաբուսաբանական տվյալների համաձայն քունջութքի ընտելացումը, մուտքը երկրագրություն կատարվել է Հնդկաստանում: Հնաբուսաբանական արկա տվյալների համաձայն Հայաստանը մեկնարկային տարածք է հանդիսացել դեպի Մերձավոր Արևելք քունջութքի տարածման համար, ինչը սկսվել է Ենթադրաբար Վանի թագավորության շրջանում: Հետագայում քունջութքը ամուր հիմնադրվել է Հայկական լեռնաշխարհում և միջնադարում արդեն համարվել է հայերի հիմնական յուղատու մշակաբույսերից մեկը (Bedigian, 1998): Կավանորում պաշարված մանրապտուղ սորուկի (*Camellina microcarpa*) և երկու այլ անորոշ խաչածառկավորների սերմեր են հայտնաբերվել Կարմիր Բլուրում (Պոտրովսկի, 1950, 1952, 1955, 1961):

Ինչպես նշում են Գ.Ն. Լիսիցինան և Լ.Վ. Պրիշչեպենկոն պալեոէկոնոմիկայի սկզբնավորումը և ծևակորումը որոշակի տարածաշրջանում տեղի է ունենուն միայն հրեն բնութագրական կանոնների համաձայն՝ կախված տվյալ տարածաշրջանի բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից (Լիսիցինա, Պրիշեպենկո, 1977): Սակայն ինչպես ցոյց են տալիս մեր հետազոտությունների արդյունքները այդ կանոնը միշտ չի գործել: Այսպես՝ այն բնակլիմայական և մշակության պայմանների ներքո, որտեղ մշակվել է փափուկ ցորեն և գարի, կարող լի մշակվել նաև իր ասահանջկուտությամբ աչքի չընկնող հաճար, միահատիկ ցորեն, ոսպ, սիսեռ, ոլոռ, սորուկ և այլ մշակաբույսեր, սակայն ինչպես վկայում են շուրջ 25 հնավայրերից հայտնաբերված հնաբուսաբանական նյութերը, բրոնզի և վաղ երկարի դարաշրջաններում մշակվել են զիխավորապես փափուկ ցորեն և թեփուկավոր գարի:

Նմանօրինակ փաստերը հիմք են տալիս կատարել հետևյալ եզրակացությունը. Հին հասարակությունների բուսաբուժության առանձնա-հաստկությունների ծևավորման վրա ազդող զիխավոր գործոնները եղել են տվյալ հասարակության տնտեսական և մշակույթային ավանդույթները:

**4.4. ՀՀ տարածքի նոր քարի - երկարի դարաշրջանների մոլախոտերը:** Ամփոփելով ՀՀ տարածքի նախապատմական հնավայրերից հայտնաբերված ոչ մշակովի խոտային կենսածերի պատկանող բույսերի կազմը պարզ է դառնում, որ

դրանք գրեթե բացառապես ներկայացված են տարաբնույթ, իհմնականում՝ սեզետալ, երբեմն՝ ռուերալ մոլախոտերով:

Նախապատմական ժամանակների մշակաբույսերի դաշտերում և բնակատեղիների տարածքում ու շրջակայքում աճած ոչ մշակովի բույսերի մնացորդները հնապտղաբանական նյութերի պարտադիր մասն են: Այդ բույսերը՝ մոլախոտերը, ակնհայտորեն ուղեկցել են մարդուն իր նստակյաց կենսակերպով պատմության ողջ ընթացքում:

ՀՀ տարածքի նախապատմական անցյալի սեզետալ մոլախոտերն են կումկոտրուկը (*Adonis*), սեզը (*Agropyron*), վարչուկը (*Alyssum*), կաղամբը (*Brassica*), սորուկը (*Camelina*), թելուկը (*Chenopodium*), պատառուկը (*Convolvulus*), հժախտոր (*Echium*), իշակաբոնուկը (*Euphorbia*), մակարդախոտոր (*Galium*), կաքավկրկուտը (*Lithospermum*), կավաչը (*Papaver*), մատիտեղը (*Polygonum*), գորտոնուկը (*Ranunculus*), ավելուկը (*Rumex*), եղեսպակը (*Salvia*), շամբը (*Scirpus*), ծվծպուկը (*Silene*), արեղախտոր (*Stachys*), շնկոտեմը (*Thlaspi*), կովախտոր (*Vaccaria*) և այլ ցեղերի ներկայացուցիչները: Նախապատմական ռուերալ մոլախոտերի կազմը համեմատաբար սահմանափակ է, դրանցից են սև բանջին (*Hyoscyamus niger*), թելուկի (*Chenopodium*), հավակատարի (*Amaranthus*), ավելուկի (*Rumex*), մատիտեղի (*Polygonum*) որոշ տեսակներ: ՀՀ տարածքի մ.թ.ա. հնավայրերում ամենահաճախ և ամենամեծ քանակություններով հանդիպող մոլախոտերը գաղտրիկազգիներն (Boraginaceae) են, մասնավորապես՝ դաշտային կաքավկրկուտը (*Lithospermum arvense* [= *Buglossoides arvensis*]): Գաղտրիկազգիների քանակական գերակշռությունը թերևս պայմանավորված է ատենախոտության բրոնզի դարին վերաբերվող քամում քննարկվող ընտրողական պահպանման երևույթի կամ մրցունների գործունեության հետ: ՀՀ տարածքում նոր քարից երկարի դարաշրջաններում ամենատարածված գաղտրիկազգիներն են դաշտային և դեղատու կաքավկրկուտները (*L. arvense*, *L. officinale*), արևելյան ուկրարեկը (*Lycopsis orientalis*), մուգ-գորշ նոնեան (*Nonea pulla*), ռոխելիան (*Rochelia*), ինչպես նաև ոչ հաճախակի հանդիպող փոքր մոմախոտը (*Cerinthe minor*), սովորական հժախտոր (*Echium vulgare*), արևելյան խարին (*Alkanna orientalis*), շնալեզուն (*Cynoglossum*), որոնք սեզետալ մոլախոտեր են, և այլն: Դրանց առկայությունը հնավայրերում, որտեղ մշակաբույսերի մնացորդները չեն պահպանվել, մեր կողմից օգտագործվել են որպես հացազգի մշակաբույսերի առկայության անուղղակի ապացույցներ: Իր քանակով և հաճախակիությամբ աչքի ընկնող մոլախոտերից են նաև մատիտեղազգիների և սորոնազգիների ներկայացուցիչները, մասնավորապես՝ ավելուկի (*Rumex*) և մակարդախոտի (*Galium*) տեսակները:

Հիգրո- և իհդրոֆիլ մոլախոտերի բավականին մեծ խումբ են կազմում բոշխազգի բույսերը (Cyperaceae): Հայաստանի նոր քարի - երկարի դարյան բոշխազգի մոլախոտերից են բոշխերը (*Carex*), ձահճախոտը (*Eleocharis*), շամբը (*Scirpus*), ծովակինյա պալարաձլուկը (*Bolboschoenus maritimus*), ճախոտը (*Schoenoplectus*), դումը (*Cyperus*): Այս ընտանիքի բույսերի առկայությունը հնաբուսաբանական նյություն հստակ վկայություն է հանդիսանում խոնավ բնակլիմայական պայմանների կամ կանոնավոր ռոռումով երկրագործություն վարելու նաևին:

Սյախտով՝ իհմնավելով ՀՀ տարածքին վերաբերվող հնաբուսաբանական տվյալների վրա, ստորև տալիս ենք մոլախոտերի մեր սահմանումը. Մոլախոտեր են

Կոչվում մարդաստեղծ (անթրոպոգեն) էկոհամակարգերում աճող, բայց մշակության օբյեկտ չհամուխացող բույսեր:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կողմից կատարած հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ըստ ներկայումս արձանագրված հնաբուսաբանական նյութերի Հայաստանի Հանրապետության տարածքում երկրագրությամբ սկսել են գրաղվել նոր քարի դարաշրջանից՝ Վրարատյան դաշտում՝ մ.թ.ա. VI հազարամյակի սկզբից:
2. «Հ տարածքում մ.թ.ա. VI-I հազարամյակներում (տարբեր դարաշրջաններում և տարբեր տևողություններով) մշակվել են առնվազն 25 դաշտային մշակաբույսեր՝ 16 հացարույս (Poaceae - *Triticum vulgare*, *T. compactum*, *T. sphaerococcum*, *T. spelta*, *T. durum*, *T. dicoccum*, *T. monococcum*, *Hordeum vulgare* ssp. *distichon* convar. *distichon*, *H. vulgare* ssp. *vulgare* convar. *vulgare*, *H. vulgare* ssp. *vulgare* convar. *coeleste*, *H. lagunculiforme*, *Secale*, *Avena*, *Panicum miliaceum*, *Setaria italica*, *Sorghum*), 6 հատիկաբներեն (Fabaceae - *Lens culinaris* ssp. *microsperma*, *Vicia ervilia*, *Pisum sativum*, *Cicer arietinum*, *Vicia faba*, *Lathyrus*), և 3 սովորական յուղատու (Brassicaceae - *Camelina microcarpa*, *Alyssum desertorum*; Pedaliaceae - *Sesamum indicum*): Այդ դաշտային մշակաբույսերի ցաներն աղտոտած իհմնական մոլախոտերը 74-ն են՝ 23 ընտանիքներից: Նշված 74-ից 26-ը նոյնացվել են տեսակային, 38-ը՝ ցեղային և 10-ը՝ ընտանիքային մակարդակով: 45 կարգաբանական միավորների պատկանող մոլախոտեր «Հ տարածքի նախապատճական ժամանակաշրջանի համար առաջին անգամ արձանագրվել են մեր կողմից:
3. Արարատյան դաշտի նորքարեդարյան դաշտային մշակաբույսերը ներկայացված են հացազգիներով՝ մերկահատիկ ցորեն ու գարի, հաձար, բակլազգիներով՝ ռոս և համրիչանան վիկ, հնձաւ նաև յուրօինակ յուղատուներով՝ սորուկ և վարչուկ, որոնք արձանագրված չեն Կովկասի և Սերծավոր Արևելքի այլ համաժամանակյա բնակատեղների համար:
4. Արարատյան դաշտում և Կովկասում նոր քարի դարաշրջանում գերակշռել են մերկահատիկ հացազգի մշակաբույսերը, սակայն Արարատյան դաշտում բակլազգի մշակաբույսերը ունեցել են ավելի մեծ տնտեսական նշանակություն, քան Կովկասի այլ տարածքներում: Մերկահատիկ հացաբույսերի գերակշռումը վկայում է Եփողայի նորքարեդարյան բուսաբուծության հետ կապերի մասին: Արարատյան դաշտում նոր քարի դարաշրջանում մշակված բոլոր բույսերը (բացառությամբ յուղատուների) մշակվել են նաև Սերծավոր Արևելքում, որտեղ ևս բակլազգի մշակաբույսերը ունեցել են կարևոր տնտեսական նշանակություն, սակայն գերակշռել է թեփուկավոր հազարգիների մշակությունը: Արարատյան դաշտի նորքարեդարյան բուսաբուծությունը Սերծավորարևելյան և Կովկասյան այլ տարածաշրջանների համաժամանակյա բուսաբուծությունների հետ ընդհանրություններ ունենալով հանդերձ տարբերվում է երկուսից ել՝ արտահայտելով մեկուսացված տարածաշրջանային զարգացում:
5. Պղնձի-քարի դարաշրջանը դաշտային մշակաբույսերի մշակության առումով անցումային փուլ է հանդիսացել. այս դարաշրջանում մշակաբույսերի կազմը և հարաբերակցությունը սկսում է նմանվել բրոնզի դարաշրջանին բնորոշ

իրավիճակին. այս դարաշրջանում բակլազգիները և մերկահատիկ գարին մշակվել են պակս ծավալներվ, քան նոր քարի դարաշրջանում:

6. Դաշտային մշակաբույսերի կազմը բրոնզի դարաշրջանի վաղ, միջին և ուշ փուլերում և վաղ երկաթի դարում էական փոփոխություններ չի կրել. բուսաբուծության առանցքային ուղղությունը եղել է հացաբույսերի՝ սովորական ու կունդիկ փափուկ ցորենների և թեփուկավոր երկարք սովորական գարու մշակությունը. բակլազգի, յուղատու և այլ դաշտային մշակաբույսեր հավանաբար չեն մշակվել կամ մշակվել են շատ փոքր ծավալներով:

7. Վաղ բրոնզի դարաշրջանում և հավանաբար նաև բրոնզեդարի միջին և ուշ փուլերում կիրառվել են հացահատիկների խառը ցանքեր, որոնցում գերակշռող տարրը եղել է թեփուկավոր գարին, իսկ ցորենները հանդես են եկել ընդհամենը մի քանի տոլկոսանոց խառնուրդի ձևով: Բրոնզեդարյան և երկաթեդարյան դաշտային մշակաբույսերի պաշարները բնութագրվում են սերմերի մաքրության զգալիորեն բարձր արժեքներով, որը վկայում է դեռևս այդ դարաշրջաններում մշակության ընթացքում դաշտում կիրառվող քաղանի և հավաքված բերքի զտման միջոցառումների կիրառման մասին:

8. Կանի թագավորության շշանում (մ.թ.ա. IX-VI դդ.) դաշտային մշակաբույսերի կազմը անհամեմատ հարստանում է, որը բացատրվում է մի շարք մշակաբույսերի ներմուծմամբ և տեղական փոքր ծավալներով մշակվող բույսերի մշակության ծավալների մեծացմամբ:

9. Ներկայումս << տարածքում մշակաբույսերի դաշտերն աղտոտող հիմնական նոյնախոսերը տեղական ագրոֆիտոցենոզների կազմում են դեռևս վաղ հոլոցենի (Աերկա երկրաբանական դարաշրջանը) ժամանակաշրջանից:

10. Հին հասարակությունների բուսաբուծության առանձնահատկությունները պայմանավորող գլխավոր գործուները եղել են տվյալ հասարակության տնտեսական և մշակույթային ավանդույթները:

## Ատենախոսության թեմայով իրատարակված գիտական աշխատանքների ցուցակը

1. **Օվսույն Р.А.** Археокарнологический анализ экскрементов травоядного животного из кургана №1 могильника Неркин Навер. *Археология, этнология и фольклористика Кавказа* (мат. международ. конф., Ереван, 17-18 ноября, 2003), 2003. Первопрестольный Святоой Эчмиадзин, “Азарашен”, с. 68-71.

2. **Hovsepyan R.A.** Archaeobotanical finds of six-rowed barley (*Hordeum vulgare*) from the Neolithic layers (7<sup>th</sup>-6<sup>th</sup> millennia B.C.) of the Arataшен settlement of Armenia. *Flora, vegetation and plant resources of Armenia*, 15, 2004. Yerevan, pp. 123-125.

3. **Հովսեփյան Ռ.Ա.** Առատաշենի Աեղիքան բնակատեղի հնարժուարանական նյութերը (2003-2004 թթ. ուսումնասիրությունների նախնական արդյունքները). *Հին Հայաստանի մշակույթը*, XIII. 2005. Երևան, “Սուլիմի”, էջ 51-55:

4. **Օվսույն Р.Ա., Ավետիսյան Պ.С., Շատենյե Կ., Գասպարյան Բ.Յ.** Археоботанические находки из энеолитического поселения Годедзор (Сюник). *Агронавука*, 2005. 5-6, Ереван, с. 275-280.

5. **Ավետիսյան Ր., Ավետիսյան Պ., Գասպարյան Բ., Գաբրիելյան Ի., Խապետյան Ը., Օվսույն Ր., Առաքելյան Դ.** Палео- и архео- среда прилегающих территорий Арамусского

памятника (Комаукское плато). *Ежегодник («Тарегирк»)*, 2005. Ереван, Изд. ЕГУ, с. 211-233.

6. **Hovsepyan R.A.** Preliminary analysis of archaeobotanical materials from the Early Bronze Age settlement of Tsaghkasar (Armenia). *Proceedings of the I (IX) International Conference of Young Botanists in Saint-Petersburg* (May 21-26, 2006), 2006. Saint-Petersburg, p. 285.
7. **Hovsepyan R.A.** Eneolithic plants from South-East Armenia (Godedzor settlement). *Plant, fungal and habitats diversity investigation and conservation*, IV Balkan Botanical Congress, 2006. Sofia, Bulgaria, pp. 176.
8. **Hovsepyan R.A.** Plant remains from Neolithic settlement of Aknashen (South-West Armenia). *Plant, fungal and habitats diversity investigation and conservation*, IV Balkan Botanical Congress, 2006. Sofia, Bulgaria, pp. 176-177.
9. **Badalyan R., Lombard P., Avetisyan P., Chataigner Ch., Chabot J., Vila E., Hovsepyan R., Willcox G., Pessin H.** New data on the late prehistory of the Southern Caucasus. The excavations at Aratashen (Armenia): preliminary report. In: *Les cultures du Caucase (VI<sup>e</sup>-III<sup>e</sup> millénaires avant notre ère). Leurs relations avec le Proche-Orient*. 2007. Lyonnet B. (ed.). CNRS ÉDITIONS, Paris, pp. 37-61.
10. **Hovsepyan R.A.** The earliest finds of cultivated plants in Armenia: archaeobotanical investigations of the Aratashen and Aknashen Neolithic settlements. *14<sup>th</sup> Symposium of the International Work Group for Palaeoethnobotany* (Kraków, Poland, 17-23 June 2007), *Programme and abstracts*, 2007. Kraków, p. 74.
11. **Hovsepyan R.A.** Preliminary data on the history of barley cultivation in Armenia. *14<sup>th</sup> Symposium of the International Work Group for Palaeoethnobotany* (Kraków, Poland, 17-23 June 2007), *Programme and abstracts*, 2007. Kraków, p. 138.
12. **Hovsepyan R.** Pots contents at Nerkin-Naver tomb №4 (Republic of Armenia). *Archaeology, ethnology and folklore of the Caucasus* (Papers of International conference, Batumi, 7-8 September 2006), 2007. pp. 233-234.
13. **Овсепян Р.А.** Палеоэтноботанический материал из сосудов кургана №3 могильника Неркин Навер. *Археология, этнография и фольклористика Кавказа: Материалы Международной научной конференции* (Махачкала, 2007) «Новейшие археологические и этнографические исследования на Кавказе», 2007. Махачкала, «Эпоха», с. 215-217.
14. **Հովսեպյան Ռ.Ա.** Բուսական մնացորդներ Ծենգավիթի №3 դամբարանի կավանորներից. «Հայազգարանության և հնագիտության խնդիրներ-3», Երևանաբարդ գիտնականների գիտաժողովի նյութեր, 2007. Երևան, «Գիտություն», էջ 25-29:
15. **Hovsepyan R., Willcox G.** The earliest finds of cultivated plants in Armenia: evidence from charred remains and crop processing residues in pisé from the Neolithic settlements of Aratashen and Aknashen. *Vegetation History and Archaeobotany*, v.17, s.1, 2008. pp. 63-71.
16. **Հովսեպյան Ռ., Սելքոնյան Ս.** Շաղաթ և միջնբրոնզեդարյան բնակավայրում հնաբուսաբանական նյութերի արկայության անալիզի տվյալները: Հին Հայաստանի մշակույթը. XIV (Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր), 2008. Երևան, «Գիտություն», էջ 329-332:

## ПОЛЕВЫЕ КУЛЬТУРЫ И РАСПРОСТРАНЕННЫЕ СОРНЯКИ НА ТЕРРИТОРИИ АРМЕНИИ В ПЕРИОД НЕОЛИТА – ЖЕЛЕЗНОГО ВЕКА

### Резюме

На основании фактического материала – археоботанических находок – выявлен таксономический состав полевых культур и сорняков 33 одно- и многослойных памятников неолита – железного века (VI – I тысячелетия до н.э.) на территории РА. Согласно наличным данным в Арагатской равнине (Акнашен, Араташен) уже в неолите (VI тыс. до н.э.) имелось развитое земледелие: культивировались *Triticum aestivum/turgidum*, *Hordeum vulgare* ssp. *vulgare* convar. *coeleste*, *T. dicoccum*, *Lens culinaris* ssp. *microsperma*, *Vicia ervilia*; *Alyssum desertorum* и *Camelina microcarpa* использовались как масличные растения. Использование рыжика на раннеземледельческих поселениях ранее III тыс. до н.э. и использование бурачка вообще отмечается впервые. В энеолите (первая половина IV тыс. до н.э.) преобладают голозерные *T. aestivum* и *H. vulgare* var. *nudum*, в малых масштабах культивировались также зернобобовые – *L. culinaris* и *Pisum sativum*, масличные культуры не зафиксированы. На протяжении бронзового века (вторая половина IV тыс. – XII век до н.э.) главным направлением растениеводства было культивирование зерновых – в основном пленчатого двурядного *Hordeum vulgare*, *Triticum aestivum*, *T. compactum*, *T. sphaerococcum*; зернобобовые и масличные культуры не зафиксированы. Эта ситуация остается неизмененной в течение бронзового и раннего железного веков, вплоть до эпохи Ванского царства (железный век, IX - VI вв. до н.э.), когда в практику земледелия вошли ранее малоизвестные полевые культуры, такие как *Panicum miliaceum*, *Setaria italica*, *Sorghum*, *Sesamum indicum* и др.

В целом, согласно результатам наших исследований, на территории РА на протяжении VI - I тыс. до н.э. разводилось не менее 25 видов полевых культурных растений – 16 зерновых (Poaceae – *Triticum vulgare*, *T. compactum*, *T. sphaerococcum*, *T. spelta*, *T. durum*, *T. dicoccum*, *T. monococcum*, *Hordeum vulgare* ssp. *distichon* convar. *distichon*, *H. vulgare* ssp. *vulgare* convar. *vulgare*, *H. vulgare* ssp. *vulgare* convar. *coeleste*, *H. lagunculiforme*, *Secale*, *Avena*, *Panicum miliaceum*, *Setaria italica*, *Sorghum*), 6 зернобобовых (Fabaceae – *Lens culinaris* ssp. *microsperma*, *Vicia ervilia*, *Pisum sativum*, *Cicer arietinum*, *Vicia faba*, *Lathyrus*), и 3 масличных (Brassicaceae – *Camelina microcarpa*, *Alyssum desertorum*; Pedaliaceae – *Sesamum indicum*).

Обнаружено 74 сорных растения 23 семейств, большинство которых – сегетальные сорняки.

Как показывают результаты наших исследований, особенности растениеводства раннеземледельческих поселений Армении обусловлены в основном земледельческими и экономическими традициями данного общества.